

ՀԱՆԴԷՍ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԵՔՐԱՍՈՎ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՆ ԲՈՒՍԱՑ

Անցեալ տարի մահն անսովոր վայրագութեամբ, սուր գերանդիով մեծ ջարդ, սաստիկ կոտորած տուաւ մարդկութեան: Բռնակիւնի և Հայաստան աշխարհք արեամբ ոռոգեցան. գորդեցաւ եւրոպա, կասեցան պատերազմիդ պետութիւնք, այլ անողորմելի մահը տաւ թաւա՛մ ախտերու և հիւանդութեանց միջոցով իր ընթացքն յառաջ վարեց, խլեց նաև յազդէս ծաղիկ հասակաւ քաջ զօրականներ ու զօրավարներ. և կարծես անով ալ գոհ չըլլալով՝ իր բռնութիւնը դարձուց թագապսակ գրել խոց և մեծամեծ հանճարներու դէմ:

Կորսնցուց Բուսաստան ալ ընդ բազում այլա իւր գերահանճար քերդուղը, նիկողայ Ալեքսէվիչ Նեքրասով, մուսայն ցասման և ողբոց, որոյ տեղ չգտնուեցաւ փոխանակող և քնաց դատարի. անդարմանելի եղաւ կորուստը և ազդին սուղը ան միխթար: — Ծնաւ Նեքրասով յամին 1824 Նոյեմբերի 22 Բոտորեան կամինիցի մօտ դիւղ մը, ուր առժամանակեայ կը բնակէր նորա հայրը զինուորական պաշտօնով, Յամին 1832 մտաւ մաւնուկն Նեքրասով Եռոսլաւ քաղաքին մարզոցը. վասն զի նորա հայրը թողլով զինուորական պաշտօնը քաջուբէր իր կալուածը կրեշնելոյ՝ մօտ Եռոսլաւ: Մարդոցական ընթացից հինգերորդ դասարանէն, ուսման ընթացքը կիսակատար թողուց Նեքրասով, և մաւսմբ հօրը յորդորանօք, մասամբ ալ

կամովին ուզեց զինուորիչ. ուստի յանձնարարական նամակներով մեկնեցաւ Եռոսլաւէն դէպ ՚ի Պետերպուրկ: Ուր պատահմամբ իւր ընկերակցաց մէկուն միջոցով՝ Նեքրասով ծանօթացաւ Հոգեւորական-Ակադեմիային վարժապետ Ուսիէնսքիի հետ. այս ծանօթութիւնն պատճառ եղաւ Նեքրասովի զինուորելու դիտաւորութիւնը փոխելուն և համալսարան մտնելու պատրաստուելուն: Հայրը զայրանալով պատանւոյն ինքնակամ ընտրութեան վրայ, դադրեցուց զընկելու որոշեալ ուսմանը ՚ի պարէն: Խորիւտ պատանին այնու չքովհատեցաւ, և պատրաստուեցաւ Ուսիէնսքիի մօտ՝ համալսարանի աշակերտութեան: Բայց հարցաքննութեան որոշեալ ժամանակին չկարենալով ուսմանց մէկ նիւթոյն մէջ գոհացուցիչ պատասխան տալ, անկարելի եղաւ համալսարանի աշակերտաց կարգը անցնիլը. սակայն համալսարանի Տեսուչն փլէթնել խորհուրդ տուաւ անոր որ դասախօսութեանց միջոց յաճախէ ՚ի համալսարան՝ իբրև ազատ ունկնդիր: Նեքրասովի կենաց զընթուար պարագաներէն մէկն է այս. հարկադրեալ օրական ապրուստ ճարելու, և ուսմանց կարևոր միջոցները ձեռք բերելու, առանձնականաց դասեր կուտար և տպարանները գրելու և սրբագրելու կ'աշխատէր: Իրեն առաջին գրուածները տպուեցան յամին 1839 Լրագիր-Գպրոշքեան և Հայրենեաց-

Յիշատակարանք անունով օրագրաց մէջ. քանի մը ամիս յետոյ հրատարակեց հատորիկ մը ոտանաւոր բանաստեղծութեանց, Յնոյք և Չայնք մակագրով, զոր Պէլինսքի քննադատը չարաչար դատեցաւ, իսկ Գրատուն-վեր-ճանոթեան անուամբ օրագիրը վրան գովեստներ խօսեցաւ: Քիչ վերջը ներքաւսով հրատարակեց զանազան զաւելտներ (վոլուրվի), որոնց մէջ նշանաւորն է Հէրիշըն պարսկի մէջ չի պահուիր, աղջիկը կողպակներու տակ չի պահպանուիր. այս զաւելտները թէպէտ և առաջնագաւ գրուածոց կարգ չանցան, այլ առհասարակ ամենեցուն բնգունելի բլլալով՝ ներքաւսով սիրտ առած, բոլորովին ինքզինքը գեղեցիկ դպրութեանց նուիրեց, և յամին 1841 դադրեցուց համալսարան յաճախելը: Քանի գնաց զէպ 'ի լաւը յառաջեց նորա վիճակը: Յամին 1847 փանեպի հետ սկսաւ հրատարակել ժամանակակից օրագիրը. և որովհետեւ ժամանակին հեղինակը սկզբան ալ մենքն ալ հատուածներ գրել նոյն օրագրին մէջ, հատ հռչակեցաւ ժամանակակից չափաւր: իսկ ներքաւսով փառաց բարձրագոյն կէտին հասաւ յամին 1856, 'ի լոյս բնծայելով ստուար հատոր մը բանաստեղծութեանց: Առաջին Արեւելեան կամ Սկստոփոյի պատերազմին վերջերը, գերեաց աղատութեան խնդիրը, մանաւանդ անյաղող մարտին ելքը, մտածող անձանց խելքը կը վրգովէր, որոնք իրենց մէջ կը գտնէին և կը պախարակէին անյաղող պատերազմին պատճառները: Յարմարագոյն միջոց էր ճարտար հեղինակին մը համար՝ սուր գրիչը ուղղել զէպ 'ի յապօրէն և յանխելճ վարել և առ կեղեքիչ ժողովրդեան. չփախուց ներքաւսով այս միջոցը, բոլորովին նուիրեց իւր հանճարը և գրիչը ժողովրդեան նկուն և հարստահարեալ մասին, պաշտպանելով զնոսա և ողբալով և յանդիմանելով զհարստահարիչս: Արդէն ժողովրդեան մեծագոյն մասը հակամէտ ներքաւսովի նկատմանց՝ ծափածայն ցնծութեամբ գովեց նորա ու

գելից տողերը: Ներքաւսով առաջինն եղաւ որ համարձակօրէն կրցաւ բացաւ տրել զրով այն ալ ոտանաւոր չափմամբ, հասարակաց զգացումը, և այն մտտանջ ձկտումները որ զաղքը կը խլրտէին, ողբիկ և ոգելից տողերու տակ ամիտօք. ազգը այս տողերով զմայլած՝ դրոյին ոտից ներքեւ այնպիսի պատուանդան մը դրաւ, որոյ հասնիր կուրելի չէ:

Ինչպէս որ այս բանաստեղծին ոտանաւորներուն գաղափարները նոր էին, նոյնպէս ոճին և լեզուին ալ նոր ձև տուաւ: Ի բաց առեալ անձին սեփական, ցասկոտ և յանդիմանիչ և մաղձոտ ոճը, նորա մուսայն շատ հետեւողներ ունեցաւ, բայց նորա բարձր և խոր զգացմանց և վսեմութեան չկայ ցոյսօր հաւասարող մը: Ներքաւսով, Աստուածային Տեսարանաց հեղինակին նման, երբ մուսայն դառնացեալ 'ի նա կը շնչէ, ահաւոր բանաստեղծութիւններ յղկեալ չափեալ և յանգեալ հրաբուխօրէն գուրս կը ժայթքէ. իրաւ նա Տանդէի նման յերկինս չի վերանար և 'ի սանդարս չի ներ, և մտացածին պատիժներ չի հանձարեր՝ զանօրէնութիւնս խայտառակելու և պատժելու համար, այլ գեղեցու, տնականերու մէջ կը բանայ նա դժոխքը, նոյնը Պետրպուրկի ազնուականաց դահլիճներուն մէջ կը գնէ. ինչ գեղեցիկ, ինչ սրտազին և միանգամայն ահաւոր է, այս ոճով գրուած իր Հայրիկ ոտանաւորը, և քանի ողբոց արժանի անօրէն Հայրիկին թշուառ դատրիկը նա թաշա: Մոլեռանդ ցոփակեացն աստէն կը գտնէ իւր պատիժը երեքիւղ ողբերով և ջախջախած անդամք: Ներքաւսովի ոտանաւորներուն գրելթէ մեծագոյն մասին նպատակն է իւր խեղճ և նկուն ազգը, Ռուսաց մուծիկը (բառական թարգմանութեամբ պզտի մարդ այրուկ, գեղջուկ) քաղաքականացնել, կրթել, լուսաւորել, ճանչցնել, որ նա ալ, իր վրայ իշխողաց հաւասար արարած մ'է. անոր համար, անխնայ կը պախարակէ և կ'ողբայ նորա պաշտպանութիւնները ևս գինուլութիւնը և սնու

տիապաշտ մուրուրութիւնները: Եթէ կ'ըսէ, Եւգինէոս-Մարկոսեան ժամանակիս քաջ քննադատը, կը սիրէ զմէկը Նեքրասով, անշուշտ նորա բանաստեղծութեանց ընթերցողը միաբան պիտի վկայեն, որ Նեքրասովի սիրոյն ենթակայն ուսու գեղջուկն կամ մուծիկն է խոշորագետ, երկիծացեալ, արևակէզ, ակօսացեալ և փոշոտեալ դիմօք և պարանոցիւ: Գեղջուկին հետ, գեղջուկին վրայ, գեղջուկին բերնով ստէպ կը խօսի, կը խորհրդածէ և կ'ողբայ. շատ անգամ ալ հեգնօթէն կը պախաբակէ, ինչպէս՝ երբ գեղեցիկ տղերով կը ստորագրէ Ռուսաց սառնապատ և ձիւնաշատ ձմեռը, ուր ձիւնը խաղաղ օդով՝ մեծամեծ փերթերով թափելով կը ծածկէ զէնս և զանչէնս և հետախաղաղ կ'ընէ փայտաշատ անտառները, ու երբ մուծիկը յուսահատած կը մտածէ թէ ուստի գտնէ վառելու փայտ, Նեքրասով հեգնօթէն մի յուսահատիր կ'ըսէ, մուծիկ, եթէ փայտ չգտնես վառելու, անշուշտ կը գտնես գինի՝ արբենալու:

Մուրուրեանց հակառակամարտ գրիչ է Նեքրասով, առաքինութեան գեղեցկութիւնը ընթերցողն պէտք է ինքը աշխատի և հետևաբար դուրս հանէ: Կ'ազգէ նա մարդու սրտին խորերը, ոսկորները դող կը հանէ. բայց աւանդ, չի հանգչեցնէր: Առ մայրն գրած ոտանաւորը իր վերջին և ընտրեւագոյն գրածներէն է, յորում փափկութեան հետ 'ի միասին դառնութիւնը, վիշտը և տագնապը, մի քան զմի ելեւել կ'ընեն: Կը խոստովանի որ իւր բարձր և ազնուական զգացմունք, սէր գիղցիկ զպրութեան, ճաշակ Տանդէի և Շեքսբիրի, մօրմէն անցեր են իրեն ժառանգութիւնը. կը պատերազմի մտօք մօրը վրայ ձգուած պաղ գերեզմանաբարին հետ, որոյ ներքև դնին իր լեհացի բազմափշտ մօր դեղձան գէսերը, կ'ապոյտ վառվառն մեծամեծ աշուրները, համբերութեան, վատակրութեան, մինչև ցփախճան հաւատարիմ սիրոյ և ռիդէսէր մօր մնացորդը. այլ կը յաղթուի

Նեքրասով այն ցուրտ քարէն. ցնորք, աշխոյժ ոգւոյ և վերջին ճգունը դէպ 'ի մահ մօտեցած բանաստեղծին... Նեքրասով 36 տարի հայրենեացը ծառայելէն վերջ, հարկաւ կ'իմացուի գրչով, և երեք քառածալ մեծամեծ հատորներով Ռուսաց մատենագրութիւնը ճոխացնելէն յետոյ, փառաց ծայրը հասած և զանձով մեծացած, սկսաւ մարմնով տկարանալ, զանազան հիւանդութեամբք. այս միջոցին ևս նորա մուսայն նոր գորութիւն և սովորականէն աւելի ոյժ կ'առնու, և ցատուք կը բորբոքի. միւս կողմանէ, ինչպէս համարեալ թէ ամեն մեծահանճար, աշխարհաշէն և աշխարհավար անձանց ալ կը պատահի, սրտակոտորութիւն մը, վարանք մը, տարակոյս մը կու դայ վերան. անշուշտ Նեքրասով մտքէն կ'անցնէ, թէ արդեօք իր այնչափ ողբացած, սիրած և խրատած մուծիկն, պիտի ճաննայ օր մը իւր յարգը. բայց չընկճիր Նեքրասով այդ ծանր մօտատանջութեան ներքև, մէկ զի կը ձգէ այդ տըխուր խորհուրդը, և կը սկսի յորդորել քաջաբերել իրեն հետևողները, որ աշխատին սերմանել իւր բացած ակօսնեութուն մէջ:

Առ Սերմանաւանս

Դու սերմանող գիտութեանց
Յագարակի հայրենեաց.
Երկիրն արդեօք է վատթար,
Թէ քոյ սերմանքն էն չար.
Երկիրտ արդեօք ես հոգւով,
Կամ պակասէ քեզ կորով:
Վարձք վաստակոց են տըկար,
Բարւոյն և սերմնն նիհար:
Օ՛ն սերմանողք բարեմոյն,
Առեալ զկողովս ակաղձօն
Ըզեցրմանեաց, մատերուք
Օ՛ն անդր յառաջ. քաջ լերուք:
Սերմանեցէք զսերմ բարի
Չյաւերժակայն, ըզմտացի.
Շնորհ մեծ, երկոցդ, ասասցէ
Ազգըս Ռուսաց 'ի սըրտէ:

ինչպէս կանխեցի զրուցեցի, Ներքա-
սով փառաւորեալ էր 'ի կենդանութե
և մեծացեալ գանձով. բայց որովհետե
նա երբէք չէր խոնարհեցուցած իւր ա-
զատ գրիչը զմեծամեծս շողորթելու,
անոր համար վերջին երգոց մէջ, նոցա-
նէ՝ փառք չի սպասեր յապագայն. այլ
'ի սրտէ կը փափաքի որ մութիկը ճանչ-
նան իւր յարգը, և այն իրեն մեծ մխի-
թարութիւն և անկապուտ փառք է :

Չազնուականս ոչ գովեցի,
եւ ոչ ըզփառս նոցա թարչամ,

և կը յաւելու, թէ օտար և զատուցեալ
ազգէս ապրեցայ և նոյնպէս ալ կը մեռ-
նիմ: Վայելուչ էր արդեօք Ներքասովի,
փոխան վերջին դառն գանգատանաց,
յետագայ տողքս յաւելուլ:

Ըգբեզ, մութիկ, ես ողբացի,
Դու ինձ պըսակ անթառամ:

Ներքասով՝ անցեալ տարուան դեկ-
տեմբերի վերջերուն բոլորովին մա-
հուան դուռը հասեր էր. արդէն յետին
անգամ մ'եւ անդամահատութիւն կրե-
լով՝ տկարութիւնն չափէ դուրս զայրա-
ցեր էր, ուստի յետին անկարողութեան
հասած, զկնի երկար և չարատանջ հի-
ւանդութեանց, նոյն ամսուն 28ին,
փակեց 'ի յաւիտեանականութիւն բա-
նալու համար իւր կրակոտ աշուրները.
պղատոնական լայն ճակատը պատե-
ցաւ մահուան քրտինքով. մեռաւ Նե-
քրասով, լոցեց նորա դառնագոյ ջնա-
րը, և Ռուսաց կենդանի մատենագրաց
կարգին մէջ մնաց մեծ գատարկու-
թիւն մը: Այլ կենդանի է նա իւր քա-
ռահատոր բանաստեղծութեամբք, և
կենդանի պիտի մնայ միշտ, գեղեցիկ
դպրութեան ճաշակը առնող Ռուսաց
և օտարաց սրտերուն մէջ: Ամսոյն 30ին,
մահուան երրորդ օրը վերուցին տունէն
նորա մարմինը՝ եղեալ յոսկի ժապա-
ւէններով զրուագեալ զագաղի մէջ, ու-
սերու վրայ առած խուռն բազմու-
թեամբ տարին Նոր-կուսանաց վաղբին

գերեզմանատունը. դագաղին առջևէն
կը տանէին խուփը ձեռքերու վրայ,
որ զարգարուած էր կենդանի և ա-
րուեստակեալ ծաղկեայ պսակներով.
յուզարկաւոր բազմութեան ետեւէն կու-
գար հանդիսին համար որոշուած սգա-
ւոր կառքը, իսկ առջևէն՝ երգչաց պա-
րը յամրաբայլ առաջ կ'երթար, մեծա-
վայելուչ կերպով երգելով Սյուրք Աս-
տուաճ երգը. երգչաց ետեւէն կը տա-
նէին դաբնիէ շինուած մեծամեծ պսակ-
ներ, որոնց վրայ մանր ծաղկներով այս
վերտառութիւնը հիւսուած էին: Ի
Ռոսս կ'անանց. Երզողին զվիշտս ազ-
գիս. Անմահ երգողին զագգա. Ի փառս
կրողին զցառ ազգիս. Առ Նեքրասով՝
Ռուսանդրս:

Թափօրը Պետրպուրկի եկեղեցեաց
առջևէն անցած ժամանակ, կանկ առնե-
լով համառօտ աղօթք կ'ըլլուէր: Գե-
րեզմանատան եկեղեցւոյ մէջ, դամբա-
նական ճառ խօսեցաւ համալսարանի
աստուածաբանութե վարդապետ Կոր-
չաքով քահանայն, յորում պարզ խօս-
քերով բացատրեց հանգուցելոյն մեծ
նշանակութիւնը, իբրեւ ազգային բա-
նաստեղծ, որ կրցեր էր երգել ազգին
վշտաց և ցաւոց կրքերը և մտածութիւն-
քը, հաստատեալ 'ի մեծ յոյս և 'ի հա-
ւատս ճմարտութեան, արդարութեան
և բարւոյն: Ատենախօսն աւելցուց որ
բանաստեղծին ոգեւից ոտանաւորաց
մէջ, ընդ մեծածայն արձագանգաց ազ-
գին ցաւոց և վշտաց, ոչ ինչ նուազ
բարձրագոյ կը հնչեն ազգին հաստա-
տուն յոյսը և հաւատըր առ ճմարտու-
թիւն, յարդարութիւն և 'ի բարին. և
եթէ Ներքասով չէ արձագանք մը ազ-
գին որ և իցէ մասին կամ բաժնին,
այլ բանաստեղծ է համբէն Ռուս ազ-
գին: Իրմէ վերջը և այլ վարժապետք
խօսեցան, ոմանք հանգուցելոյն այս՝ և
ոմանք ալ այն բարեմասնութիւնքը ներ-
բողելով: Հանդիսականք բոլոր՝ ողբալով
համբէն ազգին մեծ կորուստը, կոռ-
րած սրտով հոգւոյ հանդիստ մաղթե-
լով Ներքասովի՝ դարձան տուններին,
զոհ եղած միանգամայն որ կրցան վեր-

ջին անգամ փառաւոր յուղարկաւորու-
թեան պատիւը տալ արժանապատիւ
պուետին, երբ Նեքրասովի ցանածները
բուսնին և նորա տողերը կարգայ և հաս-
կնայ մուծիկն, ոչ մի՛ այլ բազում մահ-
արձաններ պիտի կանգնէ զինքը սի-
րող և ողբացող բանաստեղծին Նիկո-
լայոս Ալեքսէեւիչ Նեքրասովի: Բանա-
ստեղծիս վերջին գրուածոց ճաշակ մը
տանը մեր ազգին, ըստ կարելոյն ճիշդ-
թարգմանութեամբ. փափաքելի էր որ
ազգային ճարտարագոյն գրիչ մը, թէ
ոչ բոլոր՝ գոնէ ըստ մասին ընտրանաւ
թարգմանելով՝ մեր հայերէն վսեմ և
ճոխ լեզուով Նեքրասովի ոգելից տաղե-
րը, հարստացնէր հայկական մատենա-
գրութիւնը:

Սկիզբն վերջին երգոց (1876-77)

Ոչ, չօգնէ ինչ, ոչ դեղատունն,
Ոչ բժշկական փորձ հրմտութիւն.
Առ ինչ կըտանքրս այս իցեն.
Երկինք, տուր ինձ ըզմահ այժմէն.
Շուրջ բարեկամքս, դէմք անպատիր,
Հաւատարիմ շունս վշտակիր,
Աչք կողակցիս լուրջ նաղենի...
Փխիցէք, զինչ ընդ միտս յածի:

Մինչ դեռ ցաւք իմ լըռեն առ վայր՝
Յընորդ գան ինձ 'ի մըխիթար.
Թուիմ տանիքս վայր իջանեն
Ծածկել զիս աստ, զինչ խաչալէմ:
Հեշտ ինձ լինէր, թողու զաստէն
Ոչ չարատանջ... Այլ տես անդէն
Ձերդ մըրըրիկք, ժամանեն ցաւք.
Ոչ յանկողնոյ, դնիմ 'ի տատասկ:
Մըրցիմ ընդ ցաւս անհրնարին,
Մըրցիմ, կըրճտեն ատամունք իմ:—
« Ո՛ր դու Մուսայ, բարեկամ հին,
« Հաս ինձ 'ի կոչըս այս վերջին:
« Մինչ վըշտագնեալ ես յայլ նուագ,
« Ժամանէիր դու օժանդակ,
« Վարդ ընդ փըշոցըս խառնելով
« Բաւելուի դու յիս կորով:
« Հըզօր զօրու քոյ ներշնչման
« Յաւոց մարմնոյս կաց դու խափան.
« Տուր ինձ զի խանդք 'ի թեւս թեթեւ
« Սաւառնեցեն ձար շուրջ զինն ».
« Զարհամարաց, վրիժու, զսիրոյ
« Ի խոր սըրտիս, ըզհուր դարթո.
« Եւ առ շիրմաւս ըզտափաքար
« Որ ճընչէն զիս, դռն, 'ի բաց տար »:

ՆԵՔՐԱՍՈՎ

Հ. ՔԵՐ. ՔՈՒՅՆԵՐԵԱՆ